ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

Հաստատում եմ

Տնօրենի Ժ/Պ Ս. Ավանեսյան

«_____» _____2024թ.

ԴԱԿ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2024-2025 ուսումնական տարի

Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ
Արաքսյա Առստամյան

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

- Ապագա քաղաքացու ինքնաճանաչման, նրա անձի և անհատականության լիարժեք դրսևորման և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում
- Ազատ և համակողմանի զարգացած, ազգային արժանապատվությամբ և քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորում
- Դպրոցում իրականացվող յուրաքանչյուր միջոցառում սովորողների համար պետք է լինի ցանկալի, դաստիարակող (միջոցառումներ, տոնական օրեր, ընթերցումներ, սպորտային միջոցառումներ և այլն)
- Դպրոցում ստեղծում ենք աշակերտական խորհուրդներ, որոնք կմասնակցեն կազմակերպվող բոլոր միջոցառումների նախապատրաստմանը և անցկացմանը

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները կառուցել գործընթացային հիմքի վրա, բարելավել դասի դաստիարակչական կողմը, իրականացնել ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքի նկատմամբ վերահսկողություն
- Աշակերտին իր իրավունքների և պարտականությունների իրազեկում
- Ձևավորել աշակերտների ինքնաճանաչողության, ինքնակառավարման, ինքնուրույն գործելու, վերլուծական մտածողության, անսովոր պայմաններում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողություններ և պատասխանատու վարք
- Սովորողներին հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին, հայրենասիրության, հանդուրժողականության հիմքի վրա նպաստել երեխաների արժեքային համակարգի կազմավորմանը
- Պայմաններ ստեղծել երեխաների ճանաչողական և հոգևոր պահանջմունքների բավարարմանը նպաստող կառույցների (արտադասարանական աշխատանք, արտադպրոցական հաստատություններ) գործունեության համար

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Դասղեկների հետ տարվող աշխատանք
- Համադպրոցական և դասարանական միջոցառումների պլանավորում և կազմակերպում
- Արտադասարանական խմբակների աշխատանքների կազմակերպում և վերահսկում
- Դպրոցի կարգապահական, դաստիարակչական, ընդհանուր աշխատանքների կազմակերպում և վերահսկում
- Աշխատանքներ աշակերտների տարբեր խմբերի հետ (սոցիալապես անապահով, ծնողազուրկ, վարքի շեղում ունեցող, շնորհալի երեխաներ)
- Աշխատանք աշակերտական խորհրդի հետ
- Գրադարանի հետ տարվող աշխատանք
- Աշակերտների արժեքային համակարգի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանք

Դաստիարակչական աշխատանքների պլանավորումը դպրոցում

Գործունեության խմբերը հետևյալն են՝
1.Մանկավարժական աշխատողներ՝
ա) դասվար-դասղեկներ
բ) ուսուցիչներ

2.Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ

3.Աշակերտներ՝
ա) աշակերտական խորհուրդ

բ) սոցիալապես անապահով երեխաներ
գ) ԿԱՊԿՈՒ երեխաներ

4. Ծնողներ՝
Ծնողական խորհուրդ

5.Վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմ՝
ա) տնօրեն
բ) Ուսմասվար
գ) տնօրենի՝ ՄԿԱ գծով տեղակալ
դ) գրադարանավար

Համագործակցություն դասղեկների հետ

Աջակցել դասղեկներին իրականացնելու արտադասարանական միջոցառումներն ու աշխատանքները

Ուսուցիչներ

Գործնական օգնություն ցույց տալ ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման ուղղությամբ

Աշակերտական խորհուրդ

1. Աշակերտական ընդհանուր ժողով
2. Դասարանական խորհուրդների ձևավորում
3. Դպրոցի ԱԽ-ի ձևավորում
4. ԱԽ-ի նախագահի ընտրություն
5. ԱԽ-ի խորհրդի ժողովներ

Աշխատանք աշակերտների հետ

- Աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի ու կանոնների ապահովման ուղղությամբ
- Հսկողություն իրականացնել սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ
- Բացահայտել և հաշվառել սոցիալապես անապահով աշակերտներին՝ ըստ դասարանների
- ԿԱՊԿՈՒ աշակերտներին մասնակից դարձնել արտադասարանական խմբակներին՝ հաշվի առնելով նրանց նախասիրությունները

Աշխատանք ծնողների հետ

- Աջակցել դասարանական-ծնողական խորհուրդների ձևավորմանը և դրանց գործունեությանը
- Մասնակցել ծնողական խորհրդի նիստերին

Աշխատանք ՄԿԱ գծով տնօրենի տեղակալի հետ

Համագործակցել ՄԿԱ գծով տնօրենի տեղակալի հետ

- Կազմակերպել սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքները, այդ ուղղությամբ համագործակցել դասղեկների հետ
- Ձևավորել սովորողների մեջ պատշաճ վարքագիծ և վարվելակերպ, նպաստել նրանց գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը, դաստիարակել մարդասիրություն և հայրենասիրություն

- Վերահսկել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովումը
- Վերահսկել սովորողների առաջադիմությունը և վարքը
- Համատեղ ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացումը
- Պլանավորել և վերահսկել աշակերտական խորհրդի աշխատանքները
- Համատեղ կազմել ուսուցիչների հերթապահության գրաֆիկը
- Օժանդակել և հսկողություն իրականացնել ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ
- Համադպրոցական միջոցառումների պլանավորում և իրականացում

Աշխատանք գրադարանավարի հետ

Օժանդակել շնորհանդեսների, գրական քննարկումների և այլ միջոցառումների կազմակերպմանը և իրականացմանը

2024-2025ուստարվա կազմակերպչական աշխատանքների և ուսումնական աշխատանքի պլան

№	*Աշխատանքի բովանդակություն*	*Կատարման ժամկետ*	*Պատասխանատու անձ*
1	2024-2025 ուստարվա նախապատրաստական աշխատանքներ՝ սեպտեմբերի մեկի կապակցությամբ	Օգոստոսի 20-31	ԴԱԿ ՄԿԱ
2	Գիտելիքի և դպրության օր. «Ողջույն քեզ դպրոց» խորագրով միջոցառում	02.09.2024թ.	ՄԿԱ ԴԱԿ
3	Կազմել հիշարժան օրերի և տոնակատարությունների գրաֆիկ	02-10.09.2024թ	ՄԿԱ ԴԱԿ
4	Դասարանական-աշակերտական խորհրդի ընտրություններ	Սեպտեմբեր	ՄԿԱ ԴԱԿ
5	Կազմակերպել աշակերտական խորհրդի և նախագահի ընտրությունների անցկացումը, Աշակերտական խորհրդում ստեղծել հանձնախմբեր	Սեպտեմբեր	ՄԿԱ ԴԱԿ
6	1. Սահմանել աշակերտների սանիտարական վիճակի, դասարանների մաքրության մշտական հսկողություն: 2. Մաքրություն պահպանելու նպատակով համագործակցել դպրոցի բուժքրոջ հետ:	Տարվա ընթացքում	ԴԱԿ ՄԿԱ
7	Սովորողների մոտ ձևավորել պատշաճ վարքագիծ և վարվելակերպ, նպաստել նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը, դաստիարակել մարդասիրություն, աշխատանք տանել սովորողների վարքի, կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների պահպանման ուղղությամբ	Տարվա ընթացքում	ՄԿԱ ԴԱԿ
8	Անցկացնել սովորողների ամենօրյա հաճախումների հաշվառում՝ ուշադրության կենտրոնում պահելով անհարգելի ուշացում-բացակայությունները, կանխել դրանք	Տարվա ընթացքում	ԴԱԿ
9	Հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն	Տարվա ընթացքում	ԴԱԿ

	սահմանված դպրոցական համազգեստով		ՄԿԱ
10	Հետևել աշակերտական և ուսուցչական հերթապահության աշխատանքներին՝ դպրոցի երկու մասնաշենքերում	Տարվա ընթացքում	ԴԱԿ ՄԿԱ
11	Մասնակցել հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի, սովորողների առաջադիմության և վարքի ընթացիկ վերահսկմանը	Տարվա ընթացքում	ԴԱԿ ՄԿԱ
12	Ստեղծել դասարանական անկյուններ՝ «Լավագույն ձեռագիր» խորագրով	Հոկտեմբեր-նոյեմբեր	ԴԱԿ ԱԽ դասղեկներ
13	Կազմել տարվա համադպրոցական միջոցառումների պլան	Սեպտեմբեր	ԴԱԿ ՄԿԱ
14	Անկախության օրվան ընդառաջ.«Դու հավերժող իմ Հայաստան » խորագրով միջոցառում	Սեպտեմբերի 21	ԴԱԿ
15	44-օրյա պատերազմի նահատակների հիշատակի օր. մոմավառություն, այցելություն զինվորական պանթեոն և ծաղկեդրում դպրոցի փառքի անկյունում	27.09.2024թ.	ԴԱԿ ՄԿԱ ԱԽ դասղեկներ
16	Թեմատիկ էքսկուրսիաների կազմակերպում, այցելություններ տուն-թանգարաններ, թատրոններ, ցուցահանդեսներ, պատկերասրահներ, եկեղեցիներ	Տարվա ընթացքում	ԴԱԿ դասվար-դասղեկներ
17	Գրադարանավարի օր. «Գիրքը իմ բարեկամն» է խորագրով փոքրիկ ցերեկույթ. « Լավագույն վայելչագիր», «Լավագույն ընթերցող» խորագրով մրցույթ -միջոցառում տարրական դպրոցի աշակերտների միջև	07.10.2024թ.	ԴԱԿ Տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահ Ռ. Շալունց
18	Միջոցառում՝ նվիրված Յուրի Բախշյանի հիշատակին	հոկտեմբեր	ԴԱԿ Հումանիտար մեթոդմիավորում
19	Տղամարդկանց միջազգային օրվան նվիրրված միջոցառում	19.11.2024թ.	ԴԱԿ
20	Մասնակցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը	Տարվա ընթացքում	ԴԱԿ դասվարներ
21	Երկրաշարժի զոհերի հիշատակի օր. Երթ, մոմավառություն և ծաղկեդրում երկրաշարժի զոհերի հուշահամալիրում	07.12.2024թ.	ԴԱԿ ՄԿԱ Դասղեկներ
22	«Շնորհավոր Նոր տարի» խորագրով դասարանական միջոցառումներ, տարեմուտի համադպրոցական միջոցառում, մրցույթ՝ «Լավագույն զարդարված դասարան 2025» խորագրով	Դեկտեմբեր	Դասղեկներ Դասվարներ ԴԱԿ ԾԽ
23	Հայոց բանակի օր. «Անպարտելի Հայոց բանակ»	28.01.2025թ.	ԴԱԿ Դասղեկներ
24	Միջոցառում՝ «Երկու հանճար՝ Թումանյան, Կոմիտաս»	Փետրվար ամսվա ընթացքում	ԴԱԿ
25	Գիրք նվիրելու ավանդական արարողություն. «Գրքի նվիրատվության օր», «Գրից մինչև գիրք»	19.02.2025թ.	ԴԱԿ Դասվարներ

			Դասղեկներ
26	Մայրենիի տոն՝ «Մայրենին իմ հոգու լեզուն է»	21.02.2025թ.	ԴԱԿ դասղեկներ
27	Հարգանքի տուրք Մեծ եղեռնի զոհերի հիշատակին, այցելություն հուշարձան-կոթող	24.04.2025թ.	ԴԱԿ ՄԿԱ 8-9-րդ դասարաններ ԱԽ
28	«Ծխախոտի դեմ պայքարի միջազգային օր»՝մայիսի 31, դաս-միջոցառում 9-րդ դասարանի աշակերտների հետ	Մայիս	ԴԱԿ
29	Հրաժեշտ դպրոցին «Վերջին դաս»	Մայիս	Դասղեկներ ԴԱԿ
30	Աջակցել քննական շրջանի աշխատանքներին	Մայիս	ԴԱԿ ՄԿԱ